Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ
Արգավանդի գյուղապետարան

գ. Արգավանդ
/093.62-59-85/
« » « » 2012թ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Արգավանդ համայնքի 2012 թ.-ի I-ին կիսամյակի հաշվետվություն*

2012թ.-ի Հուլիսի 10-ին ժամը $14^{00}$-ին Արգավանդի մշակույթի տանը կայացավ համայնքի ընդհանուր ժողով, մասնակցությամբ մարզպետարանի ներկայացուցիչ Հ.Պետրոսյան և համայնքի 120 անդամների:

Նախագահությամբ՝ Մ.Աղաջանյանի
Քարտուղարությամբ՝ Զ.Ոսկանյանի

Օրակարգում

1. 2012թվականի բյուջեի I/ին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

Զեկուցող՝ Ա.Աղաջանյան

Զեկուցողը նշեց, որ 2012թվականի ֆինանսական տարին սկսել է առանց որևէ աշխատավարձի, սոց հատկացումների, էլեկտրաէներգիայի և այլնի պարտքերի:
2012թվականի I-ին կիսամյակի բյուջեի կատարողականը և ծախսայինը՝ տես աղյուսակ N1, N2

N 1 2012թ. կիսամյակի բյուջեի մուտքեր

| Անվանումը | Պլան | փաստացի | % |
|---|---|---|---|
| Վարչական բյուջեն ընդհ. | 19083.6 | 14393.3 | 75.0 |
| հողի հարկ | 4000.0 | 1193.9 | 29.0 |
| գույքահարկ | 1020.0 | 275.2 | 26.0 |
| տեղ տուրք | 180.0 | 77.1 | 42.0 |
| վարձակալական հող | 900.0 | 595.0 | 66.0 |
| անասնաբուժ | 300.0 | -- | -- |
| այլ ոչ հարկ. եկամուտ | 900.0 | 468.5 | 52.0 |
| դոտացիա | 11783.6 | 11783.6 | 100 |
| հողի օտարում | 5900.0 | 47.5 | -- |
| տարեսկզբի ազատ մնացորդ | 1535.5 | 1535.5 | -- |
| ընդհանուր եկամուտ | 26519.1 | 15976.3 | 60.0 |

2012թ. *I-ին* կիսամյակի բյուջեի ծախսերը

N 2

| Անվանումը | Պլան | փաստացի | % |
|---|---|---|---|
| Վարչական բյուջեն ընդհ. | 19083.6 | 13306.3 | 69.0 |
| տեղական ինքնակառավարում | 10393.6 | 8477.7 | 81.0 |
| Համայնքային այլ ծառայություն | 1330.0 | 552.9 | 41.0 |
| մանկապարտեզ | 2500.0 | 1210.0 | 48.0 |
| սոց օգնություն | 400.0 | 250.0 | 62.0 |
| մշակույթ,գրադարան | 1160.0 | 740.7 | 63.0 |
| աղբահանություն | 700.0 | 571.5 | 81.0 |
| անասնաբույժ | 300.0 | -- | -- |
| Տրանսպորտ, ճանապարհային տնտես. | 300.0 | -- | -- |
| ջրամատակարարում (լույս) | 2000.0 | 1502.5 | 75.0 |
| ֆոնդային բյուջե | 7435.5 | 925.4 | 12.0 |
| կապիտալ շինարարություն | -- | -- | -- |
| **սարքեր-սարքավորումների ձեռք բերում** | 400.0 | 40.0 | 10.0 |
| այլ ակտիվների ձեռք բերման ծախսեր | 535.5 | -- | -- |
| նախագծային ծախսեր | 500.0 | -- | -- |
| կապիտալ նորոգման ծախսեր | 6000.0 | 885.4 | 14.0 |
| ընդամենը | 26519.1 | 14231.7 | 53.0 |

Գյուղապետարանը *I-ին* կիսամյակում ունի աշխատավարձի մեկ ամսվա պարտք, որը կվճարվի հուլիս ամսին, իսկ սոց վճարի և էլեկտրաէներգիայի պարտքեր չկան: Գյուղում կատարվում է աղբահանման աշխատանքները, վերանորոգվել է խմելու ջրի ջրագիծ՝ 885.4հազար դրամի չափով, վերանորոգվել են գյուղամիջյան, դաշտամիջյան ճանապարհները : Գործում է մանկապարտեզը՝ որտեղ հաճախում են 70 երեխա: Եղույթ ունեցան համայնքի բնակիչներ՝ Յ.Հակոբյանը, Վ.Մաթևոսյանը, Հ.Մաթևոսյանը: Նրանք գնահատեցին գյուղապետարանի աշխատանքները բավարար և հույս հայտնեցին, որ 2012 թվականի II-րդ կիսամյակում գյուղապետարանը բյուջեի մուտքային և նախահաշվային աշխատանքները կկատարի: Ինչպես նաև աշխատանքներ կկատարվեն համայնքի բնակչության սոցիալտնտեսական պայմանները բարելավելու համար: Հարց բարձրացվեց դիմել Արմավիրի մարզի մարզպետ պարոն՝ Ա.Ղահրամանյանին Արգավանդ համայնքում առավելագույն կարևոր առկա խնդիրների՝

1. Մանկապարտեզի
2. խմելու ջրագծի
3. ներքին ոռոգման ցանցի

վերանորոգման աշխատանքների մասին:

Հույս հայտնեցին, որ մարզպետ՝ Ա.Ղահրամանյանը կընդառաջի համայնքի առկա խնդիրներից որևէ մեկը 2012 թվականի II-րդ կիսամյակի ընթացքում կյանքի կոչելու համար:

*Արգավանդ համայնքի ղեկավար՝* *Մրաչանյան*